Շրջակա միջավայրի նախարար

պարոն Հակոբ Սիմիդյանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**1.Գործուղվող անձի անունը, ազգանունը**

Ռուզաննա Գրիգորյան

**2.Զբաղեցրած պաշտոնը**

Շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ

**3.Գործուղման վայրը և ժամկետը**

Բրազիլիայի Դաշնային Հանրապետության

2023 թվականի հունիսի 26-ից 30-ը

**4. Հրավիրող կողմը**

Գլոբալ բնապահպանական հիմնադրամ (ԳԷՀ)

**5. Գործուղման նպատակը**

Մասնակցություն ԳԷՀ խորհրդի 64-րդ նիստի աշխատանքներին

**6. Քննարկված թեմաները (հարցերը)**

- Կենսաբազմազանության գլոբալ շրջանակի հիմնադրամի (GBFF, ԿԳՇՀ) ստեղծում
- ԳԷՀ գործողությունների Ծրագիրը և 2024թ. կորպորատիվ բյուջե
- ԳԷՀ Գործընկերության հարցեր
- Անկախ գնահատման գրասենյակի (ԱԳԳ) տարեկան հաշվետվություն
- ԳԷՀ մոտեցումների գնահատում և ջրային անվտանգության հարցերի հասցեագրում
- ԱԳԳ չորսամյա աշխատանքային Ծրագիր և բյուջե

**7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված և քննարկված հարցերը**

Խորհրդի 64-րդ նիստն աննախադեպ էր հաստատված աշխատանքային ծրագրի ծավալներով, որը կազմեց 1, 397 միլիարդ ԱՄՆ դոլար՝ ներգրավելով 9,1 միլիարդ դոլարի

համաֆինանսավորում: Աշխատանքային ծրագրի շահառու է 136 երկիր, ներառյալ 43 նվազ զարգացած երկրները (LDC) և 37 Փոքր կղզիների զարգացող պետություններ (SIDS):

Առաջարկվող աշխատանքային ծրագրի շրջանակներում քննարկվեցին ռեսուրսների թափանցիկ բաշխման համակարգի (STAR) և Ինտեգրված ծրագրի (IP) նախագծերի հատկացումների մասնաբաժինները, մասնավոր հատվածի ներդրումները և բաշխումը գործակալությունների միջև:

Խորհրդի 64-րդ նիստի աշխատանքների առաջին օրվա հաջորդ կարևոր հարցը նոր՝ կենսաբազմազանության գլոբալ շրջանակի հիմնադրամի (GBFF, ԿԳՇՀ) ստեղծումն էր: Քննարկվեցին ԿԳՇՀ ստեղծման ամենատարբեր ասպեկտները, մասնավորապես՝ ֆինանսավորման աղբյուրները, որտեղ հատկապես կարևորվեց ՄԱԿ-ի կենսաբազմազանության կոնվենցիայի 20-րդ հոդվածի (Ֆինանսական ռեսուրսների) ներքո պարտավորությունները, ինչպես նաև բոլոր աղբյուրներից ֆինանսավորում ներգրավելու անհրաժեշտությունը, ռեսուրսների հասանելիության դյուրացումը, ներառյալ երկրների ուղիղ հասանելիությունը, օժանդակ մարմնի և/կամ խորհրդատվական խմբի կամ խմբերի ստեղծման հնարավորությունը՝ ներգրավվածությունը մեծացնելու և դիվերսիֆիկացնելու նպատակով, դիտորդների ընտրության և մասնակցության ձևերը և այլն: Կարևորվեց նաև Հիմնադրամի կառուցվածքի ճկունությունը, ինչը կապահովի համապատասխանելիությունը իր նպատակին և ադապտացիոն հնարավորությունը, որոշումների կայացման ընթացակարգը, ներառյալ կառավարման և քվեարկության եղանակները, ինչպես նաև սիներգիան կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության միջև:

Աշխատանքային երկրորդ օրը շարունակվեցին քննարկումները ԿԳՇՀ ստեղծման և ծրագրային ուղղությունների շուրջ: Քննարկումների ընթացքում վերհանվեցին աշխատանքային 3 ուղղություններ՝ գործողության ոլորտներ, ռեսուրսների տեղաբաշխում և հասանելիության դյուրինացում: Խորհրդի անդամների կարծիքները հիմնականում համընկնում էին հասանելիության դյուրինացման առնչությամբ, հիմնականում միավորվելով պարզեցված ընթացակարգի հնարավորության շուրջ և հիմնականում բոլորը

կողմ էին գործողությունների ոլորտներին: Տարակարծությունը վերաբերվում էր ռեսուրսների տեղաբաշխման հարցին, մասնավորապես՝

- Ապահովել կիրառելի և գործառնական ընթացակարգեր և համապատասխանելիության ցուցանիշներ
- Տարբերակված հատկացումներ երկրներին, որպես հիմք ընդունելով ԳԵՀ-8 համալրման փուլում կենսաբազմազանության պահպանությանն ուղղված հատկացումները
- Ավելացնել նվազ զարգացած երկրներին և Փոքր կղզիների զարգացող պետություններին հատկացվող մասնաբաժինները
- Գործընթացներ և խթաններ բազմակողմ զարգացման բանկերի, միջազգային ֆինանսական հաստատությունների մասնակցության ընդարձկման համար, ինչպես նաև դրա ազդեցությունը զարգացող երկրների հասանելիության հնարավորության վրա
- Խթաններ բարեգործական կազմակերպությունների համար
- Համաֆինանսավորման հնարավորությունները:

Խորհրդի անդամների հաստատմանը ներկայացվեց նաև ԳԷՀ գործողությունների Ծրագիրը և 2024թ. կորպորատիվ բյուջեն: Ներկայացված փաստաթղթում արտացոլված էր Քարտուղարությանը հատկացվող ֆինանսավորման ավելացումը՝ պայմանավորված ԳԷՀ-8 համալրման փուլում գործառույթների իրականացմամբ, ԳԷՀ կառուցվածքային փոփոխություններով և նախատեսվող լայնամաշտաբ բարեփոխումներով:

Աշխատանքային երրորդ օրը առանձին քննարկում նվիրված էր ԳԷՀ Գործընկերության հարցերին, ներառյալ ԳԷՀ-ի գործակալությունների ներգրավվածությունը՝ դիտարկելով վերջիններիս թեմատիկ և աշխարհագրական ծածկույթի բարելավման հնարավորությունները: Առաջարկ եղավ ընդարձակել բազմակողմ և տարածաշրջանային զարգացման բանկերի ներգրավվածությունը, ինչպես նաև վերանայել իրագործող գործակալությունների միջև ծրագրերի բաշխման բարելավման անհրաժեշտությունը: Ձեռք բերվեց համաձայնություն Քարտուղարության կողմից շարունակելու ԳԷՀ-ի

Գործընկերության արդյունավետության մոնիտորինգը աշխարհագրական և թեմատիկ ծածկույթի, արձնագարված արդյուքների և ներգրավվածության համատեքստում:

Խորհրդի նիստի աշխատանքների ընթացքում ներկայացվեցին նաև հետևյալ հաշվետվությունները՝

- Անկախ գնահատման գրասենյակի (ԱԳԳ) տարեկան հաշվետվություն, որտեղ արձանագրված էր իրականացված գործողությունների արդյունավետության բարելավում, թեև ցուցանիշները տարբերվում էին ըստ տարածաշրջանների և ծրագրերի ժամանակահատվածների միջև:
- ԳԷՀ մոտեցումների գնահատում և ջրային անվտանգության հարցերի հասցեագրում, որտեղ ԱԳԳ գնահատման արդյունքում վերհանված էր անհրաժեշտությունը ապահովելու, որպեսզի ջրային անվտանգության հարցերը ներկայացված լինեն ինչպես արդյունքների չափելիության համատեքստում, այնպես էլ նախագծվող ծրագրերում, որպես առաջնահերթություն ճանաչելով ֆինանսավորման կայուն մեխանիզմների ապահովումը՝ նպաստելով ջրային անվտանգության հարցերի հասցեագրմանը:
- ԱԳԳ չորսամյա աշխատանքային Ծրագիր և բյուջե:

Աշխատանքային չորրորդ օրվա կիզակետում նոր, առանցքային բնապահպանական համաձայնագրերի և շրջանակների աջակցության վերաբերյալ քննարկումներն էին: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ԿԳԾՀ ստեղծման և վերջինիս ծրագրային ուղղութունների վերհանման վերաբերյալ: Համաձայնություն ձեռք բերվեց նաև առ այն, որ ԳԷՀ-ը ևս մաս կկազմի որպես ֆինանսական գործիք ՄԱԿ-ի ազգային իրավասություններից դուրս գտնվող ծովային կենսաբազմազանության պահպանության մասին կոնվենցիայի (BBNJ) իրականացման համար:

**8.Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

ԳԷՀ կիսամյակային աշխատանքային ծրագիրը 1, 397 միլիարդ ԱՄՆ դոլար բյուջեով

ԳԷՀ գործողությունների Ծրագիրը և 2024թ. կորպորատիվ բյուջեն

Կենսաբազմազանության գլոբալ շրջանակի հիմնադրամի (GBFF, ԿԳՇՀ) ստեղծում և ծրագրային ուղղությունների ամրագրում

ՄԱԿ-ի ազգային իրավասություններից դուրս գտնվող ծովային կենսաբազմազանության պահպանության մասին կոնվենցիայի հիմնադրամի ստեղծում

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

- Ձեռք բերվեց պայմանավորվածություն, օգոստոսի 22-26 Վանկուվերում կայանալիք ԳԷՀ 7-րդ ասամբլեայի շրջանակներում կվավերացվի վերոնշյալ որոշումը և հիմնադրամը պաշտոնապես կդառնա գործառնական:
- Ելնելով այն հանգամանքից, որ Խորհրդի 64-րդ նիստի շրջանակներում առկա որոշ հարցերի քննարկումը պահանջում էր նախատեսվածից շատ ժամանակ, աշխատանքային օրակարգը հնարավոր չեղավ ամբողջովին սպառել և ԳԷՀ գործադիր ղեկավար Կառլոս Մանուել Ռոդրիգեսի նախաձեռնությամբ որոշում կայացվեց գումարել միջնստաշրջանային հեռավար Խորհրդի հանդիպում՝ քննարկելու օրակարգի հետևյալ հարցերը՝

1. Գիտելիքի կառավարման և ուսուցանման ԳԷՀ ռազմավարություն
2. Քաղաքականության համաձայնեցման բարձրացում ԳԷՀ գործառնությունների միջոցով, և
3. Համագործակցությունը Կոնվենցիաների և այլ միջազգային հաստատությունների հետ:

Շրջակա միջավայրի նախարարության
Միջազգային համագործակցության վարչության պետ

Ռուզաննա Գրիգորյան